

Նոյնութեամբ կը դնենք այստեղ Ս. Էջմիածինէն ստացուած հետեւեալ երեք Պաշտօնագիրները.

ԽՄԲ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՅԵՎ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ

ԽՈՐՀՈՒՐԴ

Թ. 140

24 Մայիսի 1938 թ

Ս. ԵՋՄԻԱԾԻՆ

Ս. ԵՐՈՒՍԱԶԷՄԻ ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐԲ

Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆԻՆ

Նորին Ս. Օծուխին Տ. Խորեն Կաթողիկոսը՝ օտույն
Ապրիլի լոյս 6ի գիշերը, հանգեալ ի Տեք արտի կաթուածից:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իսկոյն եւ եք հաղորդեց այս մասին Կառավարու-
քեան, որի հետեւանով Երեւանից ժամանեցին բժիշկներ, որոնք մանրագոյն ֆնուրիւնից
յետոյ, յայտարարեցին թէ հանգուցեալ հայրապետի մահը տեղի է ունեցել արտի կաթուածից:

Կառավարութեան առաջարկութեամբ եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի համաձայնու-
քեամբ յիշեալ բժիշկները՝ պրօֆ. Շեկ-Յովսէփեանի գլխաւորութեամբ, անդամահասեցին
հանգուցեալին դիմ, որով վախճանապէս հաստատուեցաւ՝ թէ Խորեն Ա. Կաթողիկոսի
մահը հետեւանք է եղել արտի կաթուածի: Անմիջապէս հեռագրուեցաւ Տանն Կիլիկիոյ
Շնորհազարդ Տ. Սահակ Կաթողիկոսին, Ս. Սրուսդէմի եւ Կ. Պօլսի Ամենապատէր Պաշ-
տօնաւորներին, որոնցից առաջինէն խնդրուեցաւ իրազեկ անել Արեւստանմանի բոլոր բնեւ-
րին Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի մահուան մասին՝ կարգադրելով հանգուցեալի յիշատակին
հոգեհանգիստ կատարել:

Նոյնաման հետաքրքիր ուղարկուեցան նաեւ Համամիութեանական Հանրապետու-
թիւններում զտնուած բոլոր բնեւրին: Մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ եւ կա-
տարուեցաւ հանգուցեալի օծումը ու թաղումը:

Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի վաղաժամ մահը խոր վիշտ պատճառեց Ս. Էջմիածնի
միաբանութեան, սակայն աշխարհի ամէն կողմից եւ միութեանական սահմանի Հանրապե-
տութիւններէից տեղացող վճակցութեան, սիրոյ եւ հաւատարմութեան զգացմունքներով յի
հետաքրքրեց առ պատական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միաբարում եւ քաջալերում են
մեզ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը բերում է իր շնորհակալիք Ամենապատուութեանը
եւ թովիզ հաւաստեալ ժողովրդին Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի մահուան առթիւ արտա-
յայտած ջերմ ցաւակցութեան եւ բարեմաղքութեանց համար: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը
կատարեալապէս հաւատացած է, որ թէ՛ Ձեր եւ թէ՛ հայ հաւատացեալ ժողովրդի հաւատա-
ւորեան եւ բարեացակամութեան զգացմունքները միտ վառ կը մնան առ Ընդհանրական
Հայրապետութիւնն ու առ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Աղոթենք Բարձրեային, որ պարգևի Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Ս. Էջմիածնին անասանութիւն եւ յաջողէ Հայաստանեայց եկեղեցու աւանդական կարգերի համաձայն գումարել Ս. Էջմիածնում Համազգային եկեղեցական ժողով եւ ընտրել նոր Ընդհանրական Հայրապետ:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան բարեհաճ վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ հաստատուն զբաւական է սոյն հարցի բարւոյ լուծման:

Ընդ սմին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը անհրաժեշտ է համարում հաղորդել Ձեզ, որ հանգուցեալ Տ. Խորեն Ա. Կաթուղիկոսը 1936 թուի Ապրիլի 18ի Հայրապետական Կոնգակով Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անգամ Գերաւեմորհ Տ. Գեորգ Արեպակսկոպոս Զորեմշեանին կարգել է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ընդ սմին ներփակում է յիշեալ Կոնգակի վաւերական պատճենը:

Տեղակալ Ամենայն Հայոց

Հայրապետութեան՝ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ԶԵՐԵՄՁԵԱՆ

Անգամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(ԿՆԻՔ)

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ԹԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳԹՈՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆԳԱՄՈՑ ԳԵՐԱԳՈՑՆ ՀՈԳԵՒՐ ԽՈՐՀՐԴՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՑԱՅՈՒՅՁԻՆ ՄԵՐՈՒՄ ԳԵՐԱԾՆՈՐ Հ. Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶՐԵՄՁԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑՍ ՈՂՋՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԱՆԻՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Ի նկատ առեալ գլխորձաւորին Ձեր յընթաց բազմամեայ եւ պատասխանատու պատշոնավարութեանդ, նաեւ զխոնեմ, զնեռատես եւ Եղանկատ Բնաւորութիւն Ձեր, այսու Հայրապետական Կոնգակաւս Եւանգելիսմ զՁեզ Հայրապետական Տեղակալ եւ Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդով Ս. Էջմիածնի:

Պատուէր տամ Գերաւեմորհութեանդ յես մահուան Մերոյ, խորհրդակցութեամբ Գերագոյն Հոգեւոր Խորհրդով Ս. Էջմիածնի, իսկ զընթացս ամենայն գործոց վերաբերելոց հաւատացեալ ճօշին Մերոյ եւ եկեղեցեայ Հայրոց, որք կան ի սփիւռս աշխարհի, պահելով եւ պահպանելով անաղարտ եւ սրբութեամբ զամենայն աւանդս եւ զիրաւունս եկեղեցւոյ, Եւանգելի զկանոնաւոր ընտրութիւն յաջորդին մերոյ նորոյ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ:

Լիալոյս եմք եւ հաւատամք, զի միաբանութիւնք Մայր Աթոռոյս եւ Առաջնորդք եւ Առաջնորդական փոխանորդք բեմորհից, Թեմական Խորհուրդք եւ եկեղեցական Հոգաբարձութիւնք աշակից իցին Ձերդ Գերաւեմորհութեան ըստ ամենայն մասանց ի կատար տեսելով զկարգաւորութիւնս Ձեր:

Աւանդեմք նաեւ եւ պատուէր տամ հայրաբար սիրելի եղբարցս եւ զաւակացս, Ամենապատիւ Պատրիարքաց, ամենայն առաջնորդաց, ազգային եւ եկեղեցական Վարչութեանց եւ հաւատացեալ հայ ժողովրդեան, իրենց զօրավիզ եւ գործակից Ձեզ, Տեղակալիդ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի, միաբան եւ համերաւի ընդ միմեանս յամենայն գործս բարիս եւ վարել զազգային-եկեղեցական հաստատութիւնս եւ զծեռնարկս քրիստոնեականս սիրով, յուսով եւ հաւատով:

Օրհնելով զՁեզ եւ զամենեսին, մաղթեմք ի Տեառնէ ճոյհնել Ձեզ կար եւ զօրութիւն, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անաստանութիւն եւ պայծառութիւն, Ազգիս Հայոց եւ Հայրենեացս խաղաղութիւն եւ եղանկութիւն:

Աղօթեմք առ Աստուած նաեւ վասն խաղաղութեան Աւստրիոյ եւ համերաւութեան ազգաց:

Ողջ լիբաւ, զօրացեալ ի Տէր եւ յաւէս օրհնեալ ի Մէնջ, ԱՄԷՆ:

յ18-ն Ապրիլի 1936 ամի

Ըստ Տումարիս Ռ-826

ի Հայրապետութեան Մերում Դ. ամի

յԱյրաւսեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 620

ԽՈՐԷՆ Ա.

Մայրաղոյն Պատրիարք Կաթողիկոս

Ամենայն Հայոց

(ԿՆԻՔ)

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը հաստատում է սոյն Հայրապետական Կոնգրակի պատճենի նշանակութիւնը բնագրու հետ ստորագրութեամբ եւ կնիքով դրուեմամբ: 14-ն Մայիսի 1938 թ.

Ս. Էջմիածին

Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անգամ, ԱՐՄԷՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը սոյն շրջաբերականով հրահանգում է Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր Թեմակալ Առաջնորդներին հանգուցեալ Վեհափառ Հայրապետի օծման եւ անուանակոչութեան առթիւ փոխանակ Հայրապետական մաղթանքի՝ կատարել հոգեհանգստեան պատօն, իսկ Ս. Էջմիածնի ճօնին եւ Նոր Տաւրուս կատարել մաղթանք Ամենայն Հայոց Հայրապետութեան յարասեւութեան եւ անաստանութեան համար:

Այլեւ այսուհետեւ տարւումակել յիշատակել հանգուցեալ Կաթողիկոսի անունը պատճառ ձեւով, մինչեւ նոր Հայրապետի ընտրութիւնը:

Վեոյիժեալը հազարդուում է ի գիտութիւն եւ ի գործադրութիւն թեմից բոլոր եկեղեցիներին:

Անգամ Գերագոյն

Հոգեւոր Խորհրդի՝

Թիւ 223

24-ն Մայիսի 1938 թ.

Ս. Էջմիածին

(ԿՆԻՔ)

ՎՐԹԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ